

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՀԵՐ ՄԵՍՐՈՊԻ

Վ.ՐԵԸ



ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2014

ՄՇԵՐ ՄԵՍՐՈՊԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նվիրվում է հորս

ՎՐԵԺ

ԳՄԴ 84 Հ – 4 + 63.3 (22)

Խ 282

Խաչատրյան Մհեր

Խ 282 Վրեժ : Արձակ /Մ. Խաչատրյան. – Եր.:

Հեղ. հրատ., 2014. – 396 էջ:

Մասամբ խմբագրել և սրբագրել է՝ քանասիրական գիտությունների թեկնածու–
Ալինա Մհերի Խաչատրյանը

Գիրքը թուրքերի՝ հայերի նկատմամբ կազմակերպած և իրականացրած ցեղասպանության մասին է: Այն ներկայացնում է մի քանի տոհմերի ու դրանց ներկայացուցիչների կյանքի հետազոծություններ: Գիրքը վավերագրական–գեղարվեստական է: Գործողությունները տեղի են ունենում Արևմտյան Հայաստանում, Արևելյան Հայաստանում, ԱՄՆ–ում, ՌԴ–ում: Գրքում վերոհիշյալ երկրների հասարակությունները ուրվագծվում են դիպաշարին զուգընթաց, տեղ են գտել ինչպես իրական, այնպես էլ հնարավոր պատմություններ:

ՀՏԴ 891.981-3 : 941 (479.25)

ԳՄԴ 84Հ – 4 + 63.3 (22)

ISBN 978–9939–0–0171–5

© Խաչատրյան Մ., 2014

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ. ԱՂԵԿՅԱՆ ԸՆՏԱՆՆԻՔԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	
*1. Աղեկյանների ընտանիքը	9
ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԸՆՏԱՆՆԻՔԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	
**2. Ալթուն	10
**3. Կոշկակար Թորոսը	12
**4. Լազվան գյուղը	14
**5. Շարիֆ բեկը	15
**6. Խորհրդակցություն	16
**7. Պատիժ՝ ամանց հանցանքի	17
**8. Թույլ դիմադրություն	19
**9. Կարճատև խաղաղ կյանք	20
**10. Ալթունը ամուսնանում է	22
**11. Առաջին համաշխարհային պատերազմը և հայ ժողովրդի ցեղասպանությունը	23
*12. Աղեկյան տոհմի ոչնչացումը	24
*13. Աղեկյան Հակոբի՝ ցեղասպանությունից պատահական փրկվելը	25
*14. Աղեկյան Հակոբի Ամերիկյա ռեզերվելը և այնտեղ հիմնավորվելը	28
*15. Փրկվել ցանկացած զնով կամ մոր և որդու տանջալից թափառումը	30
**16. Քրդերի ապստամբությունը և դրա դաժան ճնշումը թուրքերի կողմից	33
**17. Ալթունի եղբայրների մահը	35
**18. Թափառում Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերում	36
**19. Ալթունի դստեր՝ Ազունիկի մահը	38
**20. Փախուստ Արևմտյան Հայաստանից Վրաստան	40
**21. Փախուստ Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան	44
**22. Բոլշևիկների (կոմունիստների) մուտքը Արևելյան Հայաստան	47
**23. Մարտուպը ստանում է կրթություն, դիպվածով փոխվում է անունը և ազգանունը	49
**24. Կյանքը կոմունիստական Հայաստանի մայրաքաղաքում	51
**25. Մեսրոպը ամուսնանում է	56
*26. Աղեկյան Հակոբը ամուսնանում է	57
*27. Աղեկյան Հակոբի երեխաները ամուսնանում են կամ Հակոբը դաժանում է պապիկ	57
**28. Ալթունի մահը	59
*29. Հակոբի վրիժառության ծրագիրը իր ժողովրդի ցեղասպանության համար	60
*30. Հակոբի ծրագրի դանդաղ իրագործումը	61
*31. Կյանքը ազարակում	64
*32. Համասփյուռի կյանքը միևնույն Դարչոյի եետ ծանոթանալը	67
*33. Քարտաշյան Արևշատի փրկվելը ցեղասպանությունից և փախուստը Թուրքիայից	69
*34. Խիզախյան Դարչոյի և Քարտաշյան Արևշատի երեխաների ամուսնությունը	73
*35. Ստորգետնյա փոքր քաղաքի և ատոմային էլեկտրակայանի կառուցումը	75
*36. Մեծ նավին՝ մեծ նավարկություն	79
*37. Աղեկյան Ջորավարի պատահական փրկվելը և փախուստը Թուրքիայից	85
*38. Աղեկյան Ջորավարի կյանքը ազատ, ապա Խորհրդային Հայաստանում	86
*39. Հատուկ, բազմազգործառույթ տանկի նախագծման պահանջները	87
*40. Կյանքը և իշխանությունը Խորհրդային Հայաստանում	91
*41. Ջորավարի ընկերը՝ Վազգեն Ռշտունին	95

*42. Զորավարի մոր մահը, նրա երեխաների հաջողությունները	97
*43. Զորավարը դառնում է պապիկ	102
*44. ԽՍՀՄ-ում կամունիստական հասարակության փլուզումը	104
*45. Զորավարի տոհմը մեծանում է	112
**46. Մեսրոպի մահը	121
*47. Հայաստանը երկրորդ անգամ 20 դարում դառնում է անկախ պետություն	122
*48. Վրույրը, Թուրքիա գնալու նախապատրաստություններ	123
*49. Ռազմափոխ	124
*50. Նախապատրաստական շրջան և առաջին քայլերը	129
*51. Առաջին գործը	130
*52. Առաջին ատրճանակը և դրա փորձարկումը	133
*53. Մենք հոյակապ զինված ենք և ունենք սկզբնական կապիտալ	135
*54. Մեր գործողությունների ռազմավարությունը	138
*55. Վրիժառու կլինենք զիտությանը համահունչ	139
*56. Զորավարի թոռները և թոռնուհիները ստանում են բարձրագույն կրթություն	143
*57. Վրույրի և Ռազմափոխ կյանքի ամենավառ էջերը	149
*57.1. Դրվագ 1	149
*58. Ռոբոտների առաջին փորձարկումները	154
*57.2. Դրվագ 2	156
*57.3. Դրվագ 3	158
*57.4. Դրվագ 4	160
*59. Ռոբոտների պատրաստումը սկսվում է, Զորավարի տոհմը աճում է	161
*60. Դեպի Հայաստան	169
*61. Զորավարը որոշում է նախնիների վրեժը լուծել անհապաղ	172
*62. Մենք Հայաստանում ենք	177
*63. Կյանքը Հայաստանում	178
*64. Երազ	180
*65. Զորավարի մահը	204
*66. Թագվորը առաջնորդում է Զորավարի տոհմը	209
*67. Ինչպես Վրեժը հայտնվեց Մոսկվայում	219
*68. Թագվորը Մոսկվայում	225
*69. Ինչպես միստեր Թվիստորը ՌԴ-ում մտուր-մանկապարտեզ կառուցեց	227
*70. Ապրել Արևմտյան Եվրոպայում, իսկ մահանալ Ռուսաստանում	290
*71. Թագվորի և Վրեժի մտերմանալը	313
*72. Վրեժի առաջին այցը Հայաստան	318
*73. Բռնակյանը մշտական բնակություն է հաստատում ՀՀ-ում	322
*73.1. Քննադատական հայացք ՀՀ-ի տնտեսական և քաղաքական կյանքի վրա	326
*74. Վրեժը Գյումրիում	348
*73.2. Մի քանի տարի անց	351
*75. Վրեժը գործում է Թուրքիայում	377
*76. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	383

Հարգելի ընթերցող, այս գիրքը իր բնույթով վավերագրական-գեղարվեստական է, պարունակում է գիտական հետազոտությունների տարրեր: Որպեսզի ընթերցողը փորձի կտահել որ մասն է վավերագրական և որ մասն է գեղարվեստական տեսքտրը շարադրված է մասամբ առաջին, մասամբ՝ երրորդ դեմքերով:

Գրքի որոշ հերոսներ իրականում պատմել են իրենց և իրենց տոհմի անդամների ճակատագրերի խելվելը, այսուհետև հարկադիր գաղթն ու տարիանումը սեփական հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից: Ներկայումս կրանց թողած հողերը թուրքերի իշխանության տակ են՝ չնայած ըստ «Սերի» պայմանագրի պետք է վերադարձվեն Հայաստանին դեռևս անցյալ դարի սկզբին: Այդ տոհմերի անդամների ճակատագրերին անդրադարձել ենք իրադարձությունների զարգացմանը զուգահեռ, հետամուտ լինելով դրանց աստիճանական զարգացմանը, ինչի պատճառով շարադրանքը կլինի ոչ «հարթ», այլ «աստճանային»: Մենք ձգտել ենք առանց ծայրահեղ անհրաժեշտության չկրկնել զրքում տեղ գտած հերոսների անձնատվությունները, ինչպես նաև օգտագործել հայ և օտարագրի անուններից հնարավորինս հազվագեղ հանդիպողները՝ մեր իրականության մեջ խթանելով դրանց կիրառումը: Դա կօգնի օտարերկրյա քաղաքացիներին ավելի մոտ ծանոթանալ հայկական անձնատվություններին, որպեսզի հայերը երբևէ ստիպված չլինեն փոխել դրանք կամ հարմարեցնել իրենց ապրած միջավայրին:

Գրքում դուք կգտնեք մտքեր, որանք կարող են թվալ խորթ, նույնիսկ՝ հանցավոր: Մի՛ շտապեք դատապարտել կամ հրաժարվել դրանցից միայն կրա համար, որ այդ մտքերը չեն ներգծվում կյանքի, կրոնի, բարու և շարի, էկոնոմիկայի և քաղաքականության, խոսքի ազատության, մարդկանց և կապիտալի ազատ տեղափոխման ձեր պատկերացումների և հասկացությունների շրջանակներում: Փորձե՛ք մտածել այդ մտքերի շուրջ, անհասկանալի մտքերը և դատողությունները կարդացե՛ք ևս մեկ անգամ, միգուցե երկրորդ կամ երրորդ անգամ դրանք կթվան առավել խելամիտ:

Ամենակարևորը, մի՛ վախեցեք մտածելուց, բաղդատելուց, տարրալուծումից: Եվ, ընդհանրապես, ձգտե՛ք բռունցքների փոխարեն ավելի հաճախ օգտագործել ձեր ուղեղը: Ուղեղը կարող է անպիտանելիությունից ապաճել (բթանալ), դառնալ օգտագործման համար ոչ պիտանի (ժողովրդի մեջ ասում են «ժանգոտվել»): Թույլ մի՛ տվեք, որ այն «ժանգոտվի»: Այս գիրքը ձեզ համար նոր հորիզոններ կբացի, կներկայացնի պատմական ճշմարտությունը մեր և մեր ժողովրդի մասին: Փորձե՛ք քննադատաբար ներթափանցել արձածվող խելիքների մեջ դառնալով մեր ժողովրդի և կրա անհատների իրական բարեկամը: Միայն քննադատող մարդն է հանդիսանում ժողովրդի և անձի իրական բարեկամը: Այդ կապակցությամբ Նեկրասովը գրել է . «Ով կայրում է առանց տիրության և ցամառ, ևս չի սիրում իր հայրենիքը», - և նա չի սխալվել:

Եթե դուք համաձայն չեք քննադատության հետ և գտնում եք, որ հեղինակը մոլորվել է մասամբ կամ հիմնովին, ապա կրա գաղափարները ձեզ կարող են և չհետաքրքրել, իսկ եթե քննադատությունը ձեզ թվա խելամիտ, գուցե և որոշ քայլեր ձեռնարկեք, որոնք ի վերջո կհանգեցնեն մեր և մեր (ինչպես նաև ցանկացած այլ) ժողովրդի ծաղկմանը: Համենայն դեպս, անհրաժեշտ է հիշել մի իրականություն, քննադատող մարդը, եթե նույնիսկ ևս մոլորվում է, անհամեմատ ավելի լավն է, քան այն մարդը, որը մտածելով կամ չմտածելով, գովերգում է մարդուն կամ մի ամբողջ ժողովուրդ: Զգուշացե՛ք, այդպիսի մարդուց, ևս վտանգավոր է, ինչպես ձեզ համար, այնպես էլ ձեր ժողովրդի համար:

Հա՛յ ժողովուրդ, փստսանք եմ հայտնում այն վիճակի համար, որում ներկայումս հայտնվել են, և եթե նույնիսկ այս գիրքը չօգնի տկարամիտ և հանցագործ գաղափարներից բուժվել, ուրեմն այդուհետ ոչ ոք և ոչինչ թեզ չի փրկի:

Խորհուրդ եմ տալիս կարգալ այս գիրքը մտավորականությանը, որոնց աշխատանքը կայանում է մտածելու, տարրալուծման, փորձարարության մեջ: Ոչ մի միտք չի կարելի նախորոք թաղել կամ փառաբանել (գովաբանել): Վերահիշյալ մարդիկ հիմնականում գիտնականներ են, սակայն կարող են կարգալ նաև ուրիշները, որոնք դաստիարակված են լինել ազատ: Որոնք իրենց գործողությունների մեջ ղեկավարվում են միայն խելքով (գիտակցությամբ), գիտելիքներով, թույլ չեն տալիս ուրիշներին տիրապետել իրենց «ուղեղին» և այդպիսով իրենց ստրկացնել: Այս գիրքը հոգեպես խիզախների համար է, ազատ մարդկանց, եթե դուք ազատ մարդ եք գոնե հոգեպես, կարդացե՛ք, այս գիրքը, դուք այստեղ կգտնեք հետաքրքիր մտքերի գանգված, որոնցից շատերը կարող են ձեզ պիտանել լինել աշխատանքում և առօրյա կյանքում: Նունիսկ ավելին, նրանցից շատերը, ժամանակի ընթացքում կարող են դառնալ այնքան հասկանալի և հոգեհարազատ, որ կարող են դառնալ «ձերը», ինչպես իրականում պատահել է շատ անգամ այս գրքի հեղինակի բազմաթիվ մտքերի հետ:

Հնարավոր է որոշ գործարարներ (ձեռներեցներ) նույնպես կգտնեն օգտակար մտքեր իրենց և իրենց գործի համար, հատկապես եթե չկա ոչ մի միտք փող աշխատելու համար, իսկ որոշակի նախնական կապիտալ կա:

Բայց այն ընթերցողներին, որոնք կարծում են թե իրենց աշխարհայացքը լրիվ ձևակերպված է, և ոչ ոք, ու ոչևի չի կարող նրանց վերահամոզել մտածել և ապրել այլ կերպ, այս գիրքը ընթերցել խորհուրդ չեմ տալիս: Խոսքս հատկապես վերաբերում է շատ զգայուն անձանց, որոնց զգացմունքները գերակա են գիտակցությանը: Որոնց գիտակցության ու զգացմունքների միջև անշրպետը շատ մեծ է: Որոնք կարող են խորթ մտքերից կորցնել իրենց գիտակցությունը, ուժգին գոսալ, գրգռվել (ջղայնանալ) կամ շոտափուլթ որոշումներ կայացնել, կամ գործել, որոնց հետևանքների համար հետագայում ստիպված կլինեն պատասխանել, և արդյունքում՝ զղչալ:

Այս գրքում իրենց մասին շատ հետաքրքիր բաներ կլիմանան կրոնավորները: Հնարավոր է՝ նրանցից ոմանք վերանայեն իրենց վարքը: Բայց աշխատատեղերի բացակայության պատճառով, դժվար թե դա տեղի ունենա: Ազնիվ, նունիսկ ավելի աշխատատար աշխատանքը պետք է տա ավելի շատ նյութական բարիքներ, քան կրոնական շահախարդախախությունը, միայն այդ դեպքում գոնե կրոնական ցածր աստիճանավորները կարող են հոժարակամ հեռանալ «բեմից»:

Տկար միտք ու նյարդալիկ թույլ համակարգ ունեցող մարդիկ, որոնց հետաքրքրությունները վեր են զգացմունքներից, կարդալուց ասաջ ձեռքի տակ թող ունենան անուշադրի (նաշատիրի) սպիրտ:

Ստրուկի հոգեբանություն ունեցող մարդկանց այս գիրքը կարդալը խստիվ արգելվում է: Բոլոր ազգանունները, անունները, հայրանունները, ծննդավայրերը և ծննդյան թվականները, որոնց անդրադարձել ենք այս գրքում, բերվում են հավելվածում: Դա թույլ կտա անմիջապես իմանալ որ տեղիին է պատկանում այս կամ այն գործող անձը: Եթե դուք ոմանք լավ հիշողություն, այդ դեպքում ստիպված չեք լինի հավելվածին նայել կամ կնայեք հազվադեպ, եթե ոչ, ստիպված կլինեք նայել ավելի հաճախ, քանզի գործող անձինք քիչ չեն:

Այս գիրքը կարդալիս անհրաժեշտ է երկար մտածել՝ այստեղ դուք կգտնեք արոտատվոր մտքեր, հետաքրքիր մտքեր, դժվար ըմբռնելի մտքեր: Դրանք հասկանալու համար, ինչպես մաթեմատիկայի և ֆիզիկայի խնդիրները լուծելիս, անհրաժեշտ է ունենալ հարցի տեսությունից որոշակի կամ գոնե տարրական գիտելիքներ, ինչպես նաև մտածել իմանալ: Այդ երկու գործոնների ամակայության դեպքում կարելի է լուծել ցանկացած խնդիր: Գիտելիքների որոշակի պաշարը (հատկապես աստղագիտությունից, ֆիզիկայից, քիմիայից, մաթեմատիկայից, նյութերի դիմադրությունից, տեսական մեխանիկայից և այլնից) թույլ

կտա հասկանալ գրքում բերված բոլոր մտքերը: Կարծում եմ, վաղուց անհրաժեշտ է աստղագիտությունը փոխարինել տիեզերագիտություն ասարկայաթ:

Մի անգամ, երբ ընկերներին միջավայրում ասացի, որ Ստալինը տգետ հանցագործ էր, նրանցից մեկը հակաճառեց՝ ասելով, որ վերջինս լուրջ և երկար զբաղվել է ինքնակրթությանը, կարդացել է շատ, ինչի մասին կան փաստացի վկայություններ: Պատասխանում եմ ընկերոջս և միանգամից բոլոր նրանց, ովքեր մտածում են նույն ձևով: Բանն այն է, որ կատարելապես բավարար չէ գրքեր կարդալը, ամենակարևորը տրածը հասկանալն է, այսինքն՝ հեղինակի միտքը ընկալելը: Կարելի է միևնույն գիրքը տալ տարբեր մարդկանց, որոնք, ըստ կրթության և զարգացվածության աստիճանի, բավականին տարբերվում են, և կատանանք սպասվող արդյունքը: Ընթերցված գրքի մասին նրանք բոլորը կունենան կատարելապես տարբեր կարծիքներ, շատ հաճախ՝ հակընդդեմ: Հնարավոր է նաև, որ նրանցից միայն մեկը հասկանա այն, ինչ նպատակադրվել էր ասել գրքի հեղինակը, մնացածները հասկանան այն, ինչ ուզում են կամ կարող են հասկանալ: Օրինակ՝ եթե հարաբերականության տեսությունը տանք 100 մարդու, որոնք չունեն հատուկ, նվազագույն կրթություն, նրանցից ոչ ոք չի հասկանա՝ ինչ է գրված գրքում: Իսկ երբ մարդը չի հասկանում, կարդացած գիրքը որպես օրենք, դուր չի գալիս: Այդ մարդը ենթագիտակցաբար հասկանում է, որ ընթերցանության վրա ժամանակ ծախսեց, արդյունքում՝ ոչ հաճույք, ոչ գիտելիքներ:

Հանցագործ Ստալինը հասկանում էր ամեն ինչ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում, նա կարող էր ցանկացած միտք փոխել՝ ելնելով իր գաղափարախոսության շահերից, որպեսզի դրանք կիրառի և կատարի իր առջև դրած չար նպատակների և նույնքան չար գործերի: Վատն այն էր, որ ոչ ոք չէր կարողանում նրան ասարկել՝ իբր. «Հիմարություններ են դուրս տալիս, առաջևդ»: Մարդիկ վախենում էին միմյանցից և զլխավոր հանցագործից՝ Ստալինից: Կասես այն, ինչ մտածում ես, և վաղը զուխդ ռաբիդո վրա չի լինի: Իսկ համընդհանուր վախի և դավաճանության մթնոլորտը հաստատեց հենց ինքը՝ Սոսո Ջուղաշվիլին, նույն ինքը՝ Կոբան, նույն ինքը՝ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը:

Համանման օրինակ կարելի է բերել նաև այս գրքի կապակցությամբ. տվե՛ք այս գիրքը մտավոր տարբեր կարողությամբ 100 մարդկանց, արդյունքում կլսե՛ք բացարձակապես տարբեր ու իրարամերժ 100 կարծիքներ:

Ավելին՝ օրինաչափ և իրատեսական է, որ նույն մարդու միևնույն գիրքը 10-15 տարի պարբերությամբ կարդալիս արդյունքը կարող է ընդհուպ իրարամերժ լինել. յուրաքանչյուր անգամ միտքն ընկալելի է նախորդի հետ եզրեր չունեցող տարբերությամբ: Փոխվում են ինչպես հանգամանքները, այնպես էլ ինքը՝ մարդը:

Այսպես կոչված հավատացյալների համար ունեն մեծ անակնկալ (քանի որ նրանց քննակը առեռելի է, ապա ըստ հավանականության տեսության հնարավոր է, որ նրանցից մեկը կամ մի քանիսը կարդան այս գիրքը), այս գիրքը սուրբ է, այդ պատճառով այս գիրքը քննադատել կամ չհամաձայնվել այստեղ արտահայտված մտքերի հետ, խստիվ արգելվում է: Անջատե՛ք ձեր գիտակցությունը, մտացե՛ք ձեր գիտելիքների մասին՝ եթե նրանք գոյություն ունեն, ինչպես դուք անում եք կրոնավորներին լսելիս և անզիր արե՛ք այն ամենը, ինչ այստեղ գրված է, չէ որ գիրքը սուրբ է:

Վերջում ուզում եմ ասել, որ շատերը գիրքն ընթերցելիս, եթե գտնեն հոգեկան ուժ այս գիրքը մինչև վերջ կարդալու համար, նրանք, եթե մտածող մարդիկ են, իրենց կամ այս գրքի հեղինակին հարց կտան. «Ինչու՞ է հեղինակը այդքան հեռացել հիմնական թեմայից՝ հայոց ցեղասպանությունից»: Պատասխանում եմ: Անհրաժեշտ էր նկարագրել միջավայրը, հասարակությունը և ժամանակը, որի մեջ ապրում էին գրքում գործող անձինք. միայն այդ դեպքում համայնապատկերը կլիներ ամբողջական ու կտար ժամանակի իրական պատկերը:

Հեղինակի կարծիքը այս գրքի որոշ հերոսների որոշ մտքերի հետ կարող է չհամընկնել:

*1. Աղեկյանների ընտանիքը

1915 թ. ապրիլի 23-ին՝ երեկոյան, աշխատանքից տուն վերադարձավ Օհանի որդին՝ Աղեկյան Ասպետը: Նա ապրում էր Արևմտյան Հայաստանի տարածքում՝ Էրզրումում (Կարին): Ասպետը սիրում էր իր ժողովրդին և իր քաղաքը: Փողոցը, որտեղ նրանք ապրում էին, չար պատահականությամբ կոչվում էր Աբդուլ Համիդ II-ի անունով, ով կազմակերպիչն էր հայերի գանգվածային ջարդերի, որոնք մի փոքր ավելի ուշ՝ երիտթուրքական կառավարության օրոք, կրեցին համընդհանուր կոտորածի՝ ցեղասպանության բնույթ: Այդ փաստը Ասպետին դուր չէր գալիս, բայց ձգտում էր այդ մասին չստածել. ուրիշ մտահոգություններ շատ կային. ընտանիքը մեծ էր, անհրաժեշտ էր կերակրել: Իսկ դա շատ դժվար բան էր: Մեփական գործ ունենալը գրեթե անհնար էր. անհրաժեշտ էր աշխատել թուրքի մոտ կամ թուրքի համար: Շնտանիքի կյանքն էլ ամբողջովին կախված էր թուրքերից: Ճաշը եփված բազումն էր, մածուկը, սխտորը, ոչխարի պակիրը, էծանագին ձուկը և մոխրագուն այլուրից պատրաստված լավաշը:

Մեղանը զգված է: Կիևը՝ Աղեկաիդան, ստույգ գիտեր՝ երբ է ամուսինը գալիս տուն և որ չի սիրում սպասել, միևնույն սեղանը զցեն: Նա այդ հարցում անհամբեր էր: Երեխաներն աղոթեն նստած էին սեղանի շուրջօթյալը: Ասպետը հավատացյալ էր: Նա մտածում էր, որ ամեն ինչ աստծու ձեռքում է, այդ պատճառով երբեք չէր հակառակում հանգամանքներին: Ասպետը շատ էր սիրում իր ընտանիքին, ուստի աշխատանքից հետո ուղիղ տուն էր գալիս, երբեք չէր ուշանում: Նա շատ հայերի նման իր երեխաներին տալիս էր բարության, համբերատարության, աշխատասիրության, աստվածավախության, համեստության դասեր՝ դաստիարակելով նրանց սեփական օրինակով, քանզի մտածում էր՝ ավելի լավ է՝ մեկ անգամ տեսնեն, քան հարյուր անգամ լսեն: Նրա երեխաների մեջ հատկապես առանձնանում էր Ջորավարը: Տղան Ասպետի ուրախությունն էր՝ խելացի, մեծի նման լրջմիտ: Ասպետը միշտ նայում էր իր տղային հպարտությամբ, և այքերում փայլում էր լույսը, հույսի լույսը: Իր հասակակիցներից նկատելի խելացի և կրթված Ջորավարը ուրախացնում էր ծնողներին և հույս էր ներշնչում, որ մի օր կդառնա մեծ ու ազդեցիկ մարդ և ընտանիքը դուրս կբերի աղքատությունից: Կնոջ ջանքերով բազմապատկման աղյուսակը գիտեր գերազանց: Իր բոլոր երեխաներին Աղեկաիդան ավորեցնում էր իր իմացածը. նա հասկանում էր, որ ժամանակակից աշխարհում առանց կրթության կկորչեն: (Աղեկյան Ասպետի ընտանիքի անդամների ցուցակը բերված է հավելված 1-ում (տե՛ս 1-8-րդ կետերը): Բոլոր հավելվածներում տրվում են նրանց անունները, ազգանունները, հայրանունները, ծննդյան վայրերը և տարեթվերը):

Հարևան տանը ապրում էր Ասպետի ավագ եղբայրը՝ Արմենակ Աղեկյանը: Նա նույնպես ուներ մեծ ընտանիք. երեխաները ինն էին՝ հինգ դուստր և չորս ուստր: Ամենափոքրին անվանեց Աստվածատուր: (Աղեկյան Արմենակի ընտանիքի անդամների ցուցակը բերված է հավելված 1-ում (տե՛ս 9-19-րդ կետերը)): Նրա ավագ եղբայրը՝ Աղեկյան Մելիքը, ամուսնացել էր Արմավենի անվամբ հայուհու հետ, ով ապրում էր Ղարսում: Շուտով՝ ամուսնությունից հետո, նրանք տեղափոխվեցին Ղարս մշտական բնակության: Աները առաջարկեց միասին աշխատել. նա Ղարսում ոչ մեծ ազգաց ուներ: Աներոջ անունը Սահակ էր: Բացի աղջկանից՝ Սահակը ուրիշ եարազատ չուներ, այդ պատճառով ցանկանում էր, որ փեսան իր հետ ապրեր, առավել նա, որ աշխատանքը շահութաբեր էր: Աղացը իրականում կերակրում էր ընտանիքին, իսկ նրան օգնական էր պետք: Մելիքն և Արմավենին ունեցան շատ երեխաներ: (Աղեկյան Մելիքի ընտանիքի անդամների ցուցակը բերված է հավելված 1-ում (տե՛ս 20-28-րդ կետերը)):